ՀՀ Առողջապահության
Նախարարություն
«Հատուկ Պոլիկլինիկա» ՓԲԸ

**Министерство Здравоохранения**
**Республики Армении**
**"Специальная поликлиника" АОЗТ**

**Ministry of Health of Republic of Armenia "Special Polyclinic"JSV**

No 60
06 փետրվարի 2015թ.

*ՀՀ, Երեվան, Կոմիտաս 49/4, հեռ. (+37410) 20-93-13*
*Армения, Ереван, ул. Комитаса 49/4, Тел.(+37410) 20-93-13*
*Komitasi 49/4, Yerevan, RA,phone. (+37410) 20-93-13*

Հարգելի գործընկեր

«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Հատուկ պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու

Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված N ԾՀԱՊՁԲ-11/4 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները: Ապրանքների մատակարարման պայմաններն են Վաճառողը ապրանքը հասցնում է Գնորդին՝ ք. Երևան, Կոմիտաս 49/4 կլինիկական մասնաշենքի /չորրորդ հարկ/ հասցեով:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Կոմիտաս 49/4 կլինիկական մասնաշենքի / չորրորդ հարկ / հասցեով, N 10 սենյակ, Ռ. Գևորգյանին, մինչև 2015թ. փետրվարի 20-ը, ժամը 12.00-ն:

Հայտերը կբացվեն «Հատուկ պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքում, Կոմիտաս 49/4 կլինիկական մասնաշենք /4-րդ հարկ/ հասցեով, N 10 սենյակում, 2015թ. փետրվարի 20-ին, ժամը12.00 -ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները, նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն Միքայել Գևորգյան